ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/88

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Էփրան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ, ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21-02/24»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.02.2022թ.-ի թիվ 26/26-1/3254-2022 գրությամբ «Էփրան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 17.02.2022թ.-ին թիվ Ե/13/341-22 գրության հիման վրա, 24.02.2022թ.-ին «Էփրան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 24.02.2022թ.-ին:

24.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/88 համարի ծածկագիրը:

09.03.2022թ.-ին և 25.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 25.03.2022թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 17.02.2022թ.-ին թիվ Ե/13/341-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման, ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների ձեռք բերման նպատակով հայտարարվել է ՀԱԷԿ-ԲՄ՚ԱՇՁԲ-2/21 ծածկագրով գնման ընթացակարգ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 526-Ն առ 04.05.2017թ որոշման (այսուհետ՝

Որոշում) հավելված 1-ի (գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 21-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության հիման վրա: Գնման ընթացակարգի շրջանակներում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Էփրան» ՍՊԸ-ի միջև կնքվել է ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21-02/24 առ 12.01.2022թ պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով Որոշման 18-րդ կետը, «Էփրան» ՍՊԸ-ին գրավոր ներկայացվել է թիվ 1-02/24 լրացուցիչ համաձայնագրի նախագիծը, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Որոշման 33-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված ժամկետում «Էփրան» ՍՊԸ-ն չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի անբաժանելի մաս կազմող լրացուցիչ համաձայնագրի բնօրինակները և հրավերով պահանջվող որակավորման և պայմանագրի ապահովումները բանկային երաշխիքների կամ կանխիկ դրամի տեսքով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Որոշման 32-րդ կետի 16-րդ ենթակետը, Պայմանագրի 8.13 կետը և «Էփրան» ՍՊԸ-ի առ 09.02.2022թ գրությունը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Էփրան» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էփրան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էփրան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 24.02.2022թ.-ին գրությամբ դիմել է «Էփրան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.02.2022թ.-ի թիվ 26/26-1/3254-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ բանավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2022/88 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի մաս կազմող բաց մրցույթի հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան:

iii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) Հավելված 7-ով՝ պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի Հավելված 2-ով՝ օրացուցային գրաֆիկով (այսուհետ՝ Հավելված 2) սահմանվել է, որ աշխատանքների կատարման սկիզբ է համարվում ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսված:

iv. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Էփրան» ՍՊԸ-ի միջև 12.01.2022թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21-02/24» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

v. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Էփրան» ՍՊԸ-ի միջև թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21-02/24» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Համաձայնագիր (այսուհետ նաև՝ Համաձայնագիր) չի կնքվել:

vi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 16.02.2022թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 15.02.2022թ.-ի թիվ Ե/13/332-22 ծանուցման համաձայն՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Էփրան» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21-02/24» առ 12.01.2022թ պայմանագիրը:

Պատվիրատուն հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 18-րդ կետը՝ Մասնակցին է ուղարկվել թիվ 1-02/24 լրացուցիչ համաձայնագրի նախագիծը, որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս: Քանի որ սահմանված ժամկետում Մասնակցի կողմից ներկայացված տուժանքի ձևով որակավորման և պայմանագրի ապահովումները չեն փոխարինվել նոր ապահովումներով և չի ներկայացվել լրացուցիչ համաձայնագիրը, ուստի Պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվում է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետը և Պայմանագրի 8.13-րդ կետը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.02.2022թ.-ի թիվ 26/26-1/3254-2022 գրությամբ «Էփրան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետ համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածների համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար

պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունն անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ՀԱԷԿ-ի առանձին հատկացված հրապարակում նոր 110/220 կՎ բաց բաշխիչ սարքերի (ԲԲՍ-ի) կառուցման ապամոնտաժային, շինմոնտաժային և գործարկման-կարգաբերման աշխատանքների ձեռքբերման նպատակով 03.08.2021թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում Պատվիրատուի և Մասնակցի միջև 12.01.2022թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2/21-02/24» ծածկագրով պետական գնման պայմանագիրը: Ընթացակարգի հրավերի մաս կազմող գնանշման հարցման մասին հայտարարությամբ սահմանվել է, որ սույն գնման

գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ենթակետի պահանջներին համապատասխան, իսկ արդեն Հավելված 2-ով՝ օրացուցային գրաֆիկով սահմանվել է, որ աշխատանքների կատարման սկիզբ է համարվում ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսված:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 19.01.2022թ.-ին համաձայնագիր կնքելու վերաբերյալ ծանուցում է ուղարկվել «Էփրան» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին, սակայն վերջինիս կողմից չի ներկայացվել կնծված համաձայնագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Պատվիրատուն, ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետը և Պայմանագրի 8.13-րդ կետը, միակողմանիորեն լուծել է կողմերի միջև կնքված Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 16.02.2022թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 15.02.2022թ.-ի թիվ Ε/13/332-22 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Էփրան» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 15.02.2022թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 16.02.2022թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Էփրան» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.02.2022թ.-ի թիվ 26/26-1/3254-2022 գրությամբ «Էփրան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/88 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Էփրան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**